ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019 թվականի ապրիլի 11-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Մարինե Քոչարյանի և դասարանի աշակերտների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Սովորողների առաջադիմությունը, աշակերտների հաճախումների արդյունքները:
2. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1. Լսեցին.- Սովորողների առաջադիմությունը, աշակերտների հաճախումների արդյունքները:

Դասղեկ Մարինե Քոչարյանը ներկայացնելով սովորողների առաջադիմությունը նշեց, որ ծնողները պետք է հետևողական լինեն աշակերտների առաջադիմության վերահսկման գործում, քանի որ առջևում ավարտական և միասնական քննություններն են: Մարինե Քոչարյանը առանձնապես ծանուցեց, որ այն աշակերտները, ովքեր կունենան ուստարվա ընթացքում 120 ժամից ավել բացակայություն,պիտի հանձնեն վերաքննություն: Նմանատիպ իրավիճակի չհասնելու համար պետք է խիստ հետևել աշակերտների հաճախումներին:

Որոշեցին.

- Ուժեղացնել դասարանի աշակերտների նկատմամբ հսկողությունը սովորելու և կարգապահության հարցում՝ ծնողների կողմից, և ամեն գործում օգնել դասղեկին
- Ավելի հաճախ լինել դպրոցում, հետևել աշակերտների վարքին և կարգահապահությանը:

Լսեցին.- Ընթացիկ հարցեր:

Դասղեկը նշեց, որ նա միշտ հետևողական է եղել սովորողների սանիտարահիգիենիկ վիճակին և հերթապահությանը, գույքի պահպանմանը: Զգուշացվել են այն աշակերտները, ովքեր իրենց հավուր պատշճի չեն դրսևորել: Անմիջապես տեղեկացվել է ծնողներին ամեն ինչի մասին և դասղեկ-ծնող համատեղ ջանքերով փորձել են հարթել ծագած խնդիրները:
Դասղեկը նշեց, որ Վերջին զանգի հետ կապված որևէ դրամահավաք արգելված է: Այն լոկ ավարտական միջոցառում է, որ չպետք է դառնա շքեղ շոու:

Որոշեցին.
Դասղեկի և բոլոր ուսուցիչների կատարած աշխատանքը դասարանում գնահատել բավարար՝100 տոկոս առաջադիմություն ապահովելու համար:

Ծնող-դասղեկ-դպրոց համատեղ աշխատանքի շնորհիվ խուսափել այն իրավիճակներից, որոնք հարիր չեն աշակերտներին: Ծնողների առաջարկությամբ՝ ծնողական խորհրդի նախագահին հանձնարարվեց.

ա. Ավարտական հուշ-ալբոմների համար տրամադրել նախատեսված գումար:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Հավիաննիսյան Լուսինե/

Քարտուղար՝ /Շահնազարյան Կարինե /